Քյնում ըն։ Ճանապարհին մին արջ ա պտահում։

Արջն ասում ա.— Թոր՞ն ըք քյնում։

Աղվեսն ասում ա.— Քյնում ընք Սուրբ Կարապետ՝ պաներ օտինք։

Արջն էլ ա խնդրում, ընկերանում սրանց նըհեա, միասին քյնում ըն։ Շատ թա քիչ, մին էլ տեսնում ըն՝ մին վրեր, մաչին մին սիղաակեն ավող պեն։

Ստեղ աղվեսն ասում ա.— Հեն ա պաները վրերեն մաչին, նի տեռնանք օտինք։

Ջորսն էլ էնքան հվատացալ ըն ուրանց պաներ օտելեն, վեր ուրուր եանան նի ըն տեռնում վրևրեն մաչը, քյնում տեսնում՝ վեր մին սիպաակ քերծ ա վրերեն մաչինը։ Նի տեռնալը, նի են աեռալ, մհենդյ կարում չըն, թա մաչան այուս կյան։ Ապստում ըն։ Շաա վեր աղասում ըն, կյուլն ասում ա.— Աղվես ախպեր, սովածացալ ընք, հի՞նչ կօտինք։

Աղվեսն ասում ա.— Օղում ում մին պեն ասիմ.
—Ըլբասարակ՝ վեններեր քյաստրակ։

Միդ տոր, ծիդ տանք,

Փռնինք կոլ տանք։

Կյուլը ըլբաստրակեն կլխան ա փռնում, աղվեսը քմական, ծիք ըն տում, ցրե տում։

Էլհա ըն մնում, էլ հա ըն սովածտնում։ Արջն ասում ա.— Աղվես ախպեր, հի՞նչ կօտինք։

Աղվեսն ասում ա.— Մին պեն ըմ օղում ասիմ.
— Կյուլ՝... Թյուլ, արջ ախպեր,

Միք տոր, ծիք տանք,

Հոփ տանք, կոլ տանք։

Կյուլին ծիք ըն տամ, ցրև տամ, օտում։

Աղվեսը կյուլին ճղմղրքերտն տրջից թաքուն կեղում ա, ակնում տակը, վեր եանա օտե։ Վեր սովածանում ա, տղվեսը կամաց-կամաց տական ճղմաղենքը հանում ա, օտում։

Արջն ասում ա.—Աղվես ախպեր, էա հի՞նչ ըս օտում։

Աղվեսն ասում ա.—Արջ ախպեր, դե հի՞նչ անիմ, ես իմ ճղմաղենքս քմակտս հանում ըմ, օտում։

Արջը ըղվեսեն խելքավն ա ըղնում, թաթը քըմական կոխում, ճղմաղենքը հանում, թա օտե։ Վեր ճղմաղենքը հանում ա, արջը ստակում ա։ Աղվեսը արջեն էլ տ օտում, պրծնում։

Աղվեսը մնում ա վրերեն մաչին մինակ։ Սըկըսում ա ըսածուն ղաչանք անելը.

— Ասավտծ, ինձ սաեղան մի թահր հանե, համ մտտաղ կանիմ, համ էլ քեղ համար շամ կվառիմ։

Ըստծու մեղքը կյամ ա, ըղվեսեն էա փոսան հանում ա։ Աղվես տու աղվես, մին դռնում քա-

մակը պեց ա թողում, ասում.— էս քո մատաղը։ Մին գոնում էլ պեց ա թողում, ասում.— էս էլ քու ջամը։

Աստված սկանում ա, կղնվում, քամե անում, ղղվեսեն ետ քցում փոսեն մաչը։

Աղվեսն ասում ա.— Աստված, պա գյափ անելը գյուդում չը՞ս։ Դե վեր ա՛ ղալաթ ըմ բալ, մին կերպ բա, ես այուս կյամ, համ շամը կվառիմ, համ էլ մատաղը կանիմ։

Վերջը, աստծու թա մեղքն ա կյամ, թա ղղվեսեն հվատում ա, էտքանը գյուդում չըմ, աղվեսը վրերան այուս ա պիրում։

Աղվեսը վեր տյուս ա կյամ, մաածում ա, թա՝ հու՞նց անիմ, վեր ըսածու աված խոստումս կագարիմ։ Քյնում ա մի ճանապարհե մաչտեղը պարանց ըղնում, հունցու թա ստակած ա։ Մին չարչի էա ճանապարհավ քյինայիս, պահում ա ղղվեսեն՝ ստակած վեր ընգած։ Ղղվեսեն յոր ա օնում, տինում էչին յրա, ինքը էշան վեր կյամ, փիագա քյնամ։ Վեր մին խրեգյ ետ ա ըղնում, աղվեսը չարչու շամերը յոր ա օնում, փախճում։

Քյնում ա մին աեղ, վեր հավ կյուղանտ, շնեբը հետնան ըն պրծնում, թողում ա, փախճում։ Քյնում ա, տեսնում՝ էս ա մին աեղ ավարածնեն խրված բած, օաում ըն։ Աղվեսը մտածում ա. «էս լհա խրված, պաարասա մատաղ ա, հու՞նց կյուղանամ»։ Մին էլ բուրդան հարայհրոցը քցում ա.— Հա՛յ, հարա՛յ, Բլանց կավը կյուվերը կերեն, հասե՛ք, ես հինչ տեղն ա։

Վեր տվրածերը եր ըն կենում, վաղ ամ բիդի ղղվեսեն ասած տեղը, աղվեսը խրվածեն շըմփուրնեն յոր ա օնում, փախճում։

Քյնում ա Սուրբ Կարապետ, նատում ըրխյին, մեսը օտում, շամերը վառում ու նհետն էլ մինմին ընելավ.—էս քու ջամա, էս էլ քու մատաղտ։

18. ԱՐՋԻՆ ՀԱՆԱՔՅԸ

Մին արջ քյինիյիս ա ինում մուկնեն պունին քշաավը։ Մուկունը այուս ա կյամ, ասում.—Տու քանե՞ կլոխ օնիս, վեր իմ տան քշաավը անց ըս կենում, մաչաա էրկու կտոր կանիմ։

Էտ վախտ շամբի մաչից մինը «բրբ՛խկ» ա անում։ Արջը վախից... փախճում ա։ Մին խրեգյ վեր քյնում ա, մտածում ա, եա տեռնում, ուրանուրան ըսելավ.—Պա, ես արջ, մուկունը ինձ վրխծրցն՞ե. չէ, ես էլա բրիդի քյնիմ։

Լհա վեր մուաանում ա մուկնեն պունին, ելհա շամբրին մաչան մինը «բրբ՛խկ» ա անում, արջը ելհա յա փախճում։

Իրեքինջի գոնումը ոիսկավ մուտանում ա, մուկունը վեր տյուս ա կյամ, արջը թանթուլը մկան յրա ա կոխում, մուկնը ստակում ա։ Նշում ա տեսնում՝ մուկնեն հաքյվին տակեն մին գնդասեղեն կլխի չափ եղ կա. արջն ասում ա.—էս եղը էկ խեղճեն տոնը քանդից։ Էտ վախտը էլհա մինը քոլեն մաչան «բրբ՛խկ» ա անում, արջը վախում չի, մուաանում ա, տեսնում՝ մին էծ, ասում ա.

— Տու հու՞վ ըս, վեր ինձ՝ արջիս, վրխծրցնու՞մ ըս։

Էծը վեր արջին տեսնում ա, վախան տյողում ա, համ էլ ծիծաղում ա.

— Հանաքյ ըմ բալ։

Արջն ասում ա.— Դե վեր տու հանաքյ ըս բալ, ես էլ ըմ օգում մին խրեգյ հանաքյ անիմ։

Ընգուճան փոնում ա, մին խրեգյ պար ածում, վններան փոնում՝ ճոթոում։ Ծծը վա՛յ ա անում։

Արջն ասում ա.— Քգտնա առաջ ես ըմ վա՛յ բալ, ես ամացալ ըմ քու հանաքյներեն, աուվ էլ իմին ամաց։

19. ԱՂՎԵՍ ՆԱՆ ՎԵՐՑԱԿԸ

Մին աղվես մին վրցակու ոութանան քշերավ պտահրմ ա։ Աղվեսը վրցակեն ասըմ ա.— Տու մեղսվորություն շաա օնիս, քեզ բեդմա պատիժ աամ։

Վերցակը վիկը ծուած կաղնրմ ա աղվեսին բոաչին, ասըմ.— Աղվեսը ապրած կենա, հինչ ըմ ըրալ՝, վեր ինձ պատիժ տաս։

Աղվեսն ասըմ ա.— Տու խե՞ յըս քշերը կանչըմ, թողըմ չըս, վեր էա նղացած, ըզարած, վասակ մարդիքը քոն ինին։

Վերցակը բադասխանըմ ա.— Աղվես ախպեր, էա կանչիլը ես չըմ ադաթ քցալ, տա մեր պապերան եկած ադաթ ա։

Աղվեսը ասըմ ա.— Լյավ, էա մինը բախչըմ ըմ, ըարանրմ մեղավեր չըս. ամմա մին օրիշ պեն էլ կա, նրա ջողարն էլ առք։

Վերցակը ասըմ ա.— Ասե։

Աղվեսը հրցնում ա.— Այ հիմար, մին մարգին քանե կնեգյ ա ինում, քեզ քանենը՞ օնիս։

Վերցակը մնում ա տեղը սառած, աղվեսը կրլոխը պուկում, սկսում ա օտել։

20. ԷՄ ՆԱՆ ՎԵԽՃԱՐԸ

Մի հեաե մին էծ մին վեխճար ըխպրացալ ըն, էն ին մինտեղ ըրբծեյիս։ Ըրբծելավ քեցալ ըն ստի մին արխավ լոք ավալ, վեր վխճարեն տմակը թող ա իլալ, վ...-ը պեց ա իլալ։ Էծը ծիծաղալ ա։ Վեխճարը թա.— Հինչա՞վ ծիծղեցեր։

Թա.— Քամակա պեցվալ ա, աեստլ ըմ։
Թա, պա.— Հարուր սարե ա.
Անունտ էծ,
Հաքյիգ ցեց,
Վ...տ պեց,
Խե ես ծիծաղում չը՞մ։

21. ՄԻԱՄԻՏ ԾԻԱԾԱԽԸ

Մին մարդու մի ծի ա ինում։ Լյավ ծի ա ինում, ամա վեր միկա քվթառում ա, օղում ա ծախե, չահիլը ինք օնե։

Կապան փոնում ա, քյնում բաղար, տես քաշ սամ, աեն քաշ սամ. լյավ ծի, հա՞յ լյավ ծի...

Վեջջը մին մուշտարի ա տյուս կյամ, Թա.
— Դայի՛, հի՞նչ ա աժում։

Թա.— Էսքան, էսքան...

Թա.— Թանգյ ա։

Սա՝ թանգյ ա, նա՝ իժան ա։ Էս ծիածախն ասում ա.— Խե՞ ա թանգյ։

Թա.— Քավթառ ա։

Քավթառ ա ասում, վեր պաաառ կյինը քշցնե, ինք օնե։

Էս ծիածախն էլ կզնվում ա, Թա.— Այ մարդ, քսանհենգյ սարե իմ առանն ար, քավթառ չար, մհենգյ պերե բաղար, գասաի քվթառի՞ց։

22. ՀԱՐՈՒՍՏԵՆ ԱԽՃԻԳՅ ՆԱՆ ՆՈՔՅԱՐԸ

Մին հարուստ մարգու մին ծառա ա ինում, աղա՝ բոյավ-բուսաթավ, գեղեցիկ աղա։ Էս հարուստը կնգակ մին ախճիգյ օնե, խե՛ լյավ, կեղեցիկ... Էս ծառային աշկը էս ըխճկանը յրա ա ինում։ Ախճիգյը արան տեմ չի, ուրուր շատ ըն հըվանում, բայց դե ինքյը հըրուսաու ախճիգյ, տղան էլ ուրտնց ծառան, կինի՞։

Մին օր աղան աեսնում ա, վեր ախճիգյը քյեցով, նի մտավ կյումը։ Հեաան քյնում ա թաքուն, ըխճկան գալվան նհեա խտտում։ Էս ախճիգյը վեր գիգյասկանց ա կյամ, թա՞ վախան ա, թա՞ հինչ ա՞, ծերքեն խաթանգյաղ ա ինում, տամ ա՝ տղեն ճակատը ճղում։

Ուրուգյունը վեր հվաքվում ըն, խաղայինը եշում ա տեսնում՝ ծառային ճակատը ճղած, բարբաղ ըրած։

— Ա,— ասում ա,— բալամ, էտ հի՞նչ ա պըաահալ։

Թա.— Հերենչը քացի ա ավալ, ճղալ։

Ախճիգյը ընգղան թա.— Հերենչը լյավ ա ըրալ, աշկա էլ ըիղար հանած. տու գյուգում չըս, վերհերենչին կլոխը սուրթա բեդում ա քորիս, մաշկը թիմտրիս, ետնան մուաանաս. խե՞ բուրդան ըս մուաանում։

23. ՉՈՐԱՆԵՆ ՆՎԵՐԸ

Մին չորան ա ինում։ Էս չորանը օղում ա թագավերեն մին բաղարկա սանե։

Էծը խոզում ա, թյուրը քցում մին պարկու մաշ։ Մին էլ մին կլոխ պաներ ա քցում էտ պարկին մաշը, շիլտակը քցում, այուս կյամ թագավերեն սոնը։

Խնդրում ա, Թա.— Թագավերեն ըսեցեք, վեր չորանն օղում ա, քեզ աեսնա։

Թագավերն ասում ա.— Թող կյա։

Կյամ ա։ Նախ ասում ա.— Թագավերն ապրած կենա, քեզ համար բաղարկա յըմ պերալ, մին աման պեր թափիմ։

Մին վեսկե մժմահի յըն պիրում։ Պարկեն քյունշան փոնում ա, բագարկան թափ տամ էտ վեսկե մժմահուն մաշը։

Դե չորան՝ թագավերու պլաասամ։

Խլշկոտում ա, պաերեն յրա նկաը ըեում ա, ախեր։

Ասում ա.— Թագավերն ապրած կենա, էս առնը առ՞վ ըս շինալ, թա՞ քու պսպու սնա յա մնացալ։

Ասում ա.— Չէ, չորան ախպեր, իմ պապու անա յա մնացալ։

— Ախեր ասում ըմ, թա աու սաի ղալաթ կարել չըս անիս։

24. ԽԵԼՔՈՒ ՃԱՐԸ

Մին աեղ, մեր բղարեն նման շատ խուտուրու մին բաղար ա ինում, լի, ամեն հինչու բազար։ Մին խուտուրու մարգ, մին հափուռ էծու կտեսա ա հվաքում, է՛, կտեա... սե-սե ա ինում, չէ՞, պյուլուր-պյուլուր... մին թղթու յրա ստի ուրուր կշտե շարում, ինքյն էլ կշտեն նստում՝ էտ խուտուրու ղղսբեն մղակումը։ Հու վեր կյամ ա, ասում ա. «Աա, գե կյիժ մարդ ա, լի, թուղթեն յրա կտեաը տիրալ ա, ինքյն էլ ղրտղեն նստալ»։ Հա, հա, հա... Մին խելքը պակաս անգլամաղ, կյամ ա, ստի եշում, ահում ա. «Արա, էս մարգը նստալ ա, էն ա, ախեր, ըռաչինը... էն հի՞նչ կարող ա ինի. կաաու ա նման, է՛, պեենու նման չի»։

Ասում ա.— Ախպեր, էտ հի՞նչ ըս ծախում։
Էտ նսաածն ահում ա.— Խելքու ճար։
Թա.— Ցանի, հունց թա՞՝ խելքու ճար։

Թա, ասում ա.— Հատե, տանա վեր մին հատ համտես ըս անում, խելքտ կյամ ա, լի։

Էտ մարդին խելքը իմ խելքտն ա ինում, կռանում ա, Է՛տ, Է՛տ կտտան մինը յոր օնում, տես եշում, տեն եշում, ստի քթեն օնում, վրետ քաշում... կտեստու վրետ ա կյամ, լի... Պրոշին տինում ստի... փեյն ա, լի, ախեր կտետան հի՞նչ կինի... Թա, ասում ա.

— Արա տոնա բարբաղ ինի, սա,— ասում ա,— կտետ ա, տու հու՞նց ըս ասում՝ խելքու դաբման ա։

Ահում ա.— Տեսնու՞մ ըս, լհա մին պիծի պոշիտ նի կյալն ի բաստ խելքտ եկալ ա, ուժե դյուղում ըս թա՝ հինչ ա, պա վեր օախս՝ հինչ կանի՞ս...։

25. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԵՆ ՃՅՈՒՐ ՏԱԼԸ

Քյոհնտ դուրվին մինակ սաի ա իլալ, լի, ուրեմն. ծմեռնը հիյվընեներեն ճյուր տալ, ապուռ տալ, մին էլ դրուց անել, կյինի խմել։ Օրիշ պեն չի իլալ ծմեռնը։

Մին մարդ, դյուղացե մարդ շնըմաշումը շատ յտացած ա ինում. կյամ ըն, ուրուդյունը հաց քըցած աեդը... Հացն էլ խունչումը տիրած ա, լի, ստի, տափեն ըն նստոռում... բուրդան մենն ա ըղնում էտ մարդին։—Ա բալամ, սորե հիյվընեներեն ճյու՞ր ըս ավալ։

Թա.— Հա, ապեր, ճյուր ըմ տվալ։

— Արա, Վանդի, սոա մ՛էր ասել, ա մեռած, խմա՞լ ըն։

Թա.— Հա, ապեր, խմալ ըն։

Թա.— Սոա կինիս ըսեյիս։

Թա, ասում ա.—Ապեր, դե եշի։ Հաշիվ անինքյ, թա խունչան՝ նավը, մաման՝ կավը, Աստխեդյը՝ հերինշը, տու՝ էշը, ես էլ ստղաս վեր շվշվամ, ճյուր չը՞ք խմել խունչան։

26. ԿՅԻՆՈՒ ԿԱՐԱՍԸ

Համան էտ դյուղումը՝ Ըլբալի, մին հիլեվո՛ր մարդ կյինի պհեյիս ա ինում, առանը՝ վեղում թաղած՝ կրասեն մաշին. պահած ա, վեր քյուհնանա։ Վեր ամառն ա ինում, տաքերը վեր ըղնում ա, օղում ա թա պրավերկա անե, տեսնա՝ կյինին կենու՞մ ա, թա՞ քացախ ա տեռալ։

Կնդանը թա.— Ախեի, մին էն յաբան ինձ տո, էս ցաքյը տյուս ըմ ալակոն, կյինուն կարասը մին ահամ, բալքյա քացախ ա աեռալ։

Կնեդյը պիրում ա, ինդի, օնքերը կախ-կախ, յաբան աամ ուրան՝ մարդուն։ Ախեր, կնեգյը պիծի-պիծի բասխոդ ընելիս ա ինում։ Թաքուն։ Յաբան տամ ա, ցաքյը յոր ա օնում, տեսնում՝ կարասը պեց ա, թերհաա։

— Ամեի, էս կարտսը յաղու՞ղ թերհատ ա. բալի կլխան ե՞ր ըս կալալ, խարջալ։

— Չէ, ա մարդ, հիշտղա՞ ըմ եր կալալ։

— Պա՛, վեր եր չըս կալալ, խե՞ թերհատ ա։

— Ա մարդ, բալքյաս կարասը աական ճաքած ա։

Թա.— Ա, քնծահար, վեր տական ճաքած ինի, կլիան կթրհաաե՞։ Տական ճաքալ ա, կլխան ա թերհաաու՞մ։

27. ՀԵՐ ՈՒ ՏՂԱ

Հեր ու տղա Ըլբալի* հունձ ընելիս ըն ինում։ Օրը շատ տաք ա ինում։ Օրը շատ տաք ա ինում, մհենդյ վեր կյալ բիդին թա կեսօրեն հաց օտին, էա ժամանակ հարը ճելի կյամ ա, կոժը յոր օնում, թա մին պաառ ճյուր խմե, լի։ Ճյուրը վեր խմում ա, կած-կած ա ինում, լի, արևը տված ա ինում։ Բիդի իրիքյնակը եշում ա, թա.— Էս հի՞նչ ըս ըրալ, մին տաղաա վեր եկ, տես էս լըկելի՞ ա։

Ջուրու տղեն կյալը, հարը ըրբեն շուքումը պատառ կյուղած ա ինում, լի։ Տղան կյամ ա, աեսնում ա լի, վեր էն ա հարը շուքումը կյուղած, ասում ա.— Ապեր, լյավ չի, լի, ստեղ նստում ընք, հաց ընք օառում, համ էլ՝ կյուղում ըս։ Պաառ աեն քյնիր, լի։

Հարը ետ ա տեռնում, թա.— Թամբալ շան տղա, ստակում ըս ըրբեն չինան փոնիս, պաառ տեն քաշ տաս, շոքն ել նհետը քյնական ա, լի։

Մհենդյ, վեր կյամ ա փուրթուշ ընելու վադան, տահանք մին մեծ դազ փուրթուշ ըն անում։ Վեր օտում ըն, պրծնում, տղան ասում ա։—Ապեր, էլ նի փշրի՞մ։

Թա, ասում ա.— Արա, հու՞նց թա՝ էլ նի փըշրի՞մ,— ասում ա,— ես մին ասլան, տու մին ասլան-բալասի, էրկու կյեվաթ փուրթուշը հի՞նչ ա, վեր օտինքյ վուշ։

Լյավ օտում ըն, քոն ինում, եր կենում, նի տեռնում վարը, սկսում հունձը։

— Ա ապեր,— ասում ա,— սկի վարը առաշ չի կենում։

Քյնում չի, լի։

— Ա, բալա, հու՞նց առաշ կենա, տու մին կուծի խոխա, ես մին պառավ մարդ։

Ուրեմն՝ փուրթուշ ուտելիս մինն սալան ա,

---

* Ըլբալի-գյուղի անուն է (Ն. Կ.)։

մինն՝ ասլան-բալասի, հոնձ ընելիս՝ մինը պառավ մարդ ա, մինն էլ կուժի խոխա։

28. ԴԻՐԱԿԵՆ ՆԱՆ ՓԱԼԱՆԴՈՒՉԸ

Հիմա աղնվության, արդարության մասին ըմ խոսլական։ Ջուրը էտ ասելը, մին ծիծաղաշարժ պեն ասիմ, ետնան էլ էտ ասիմ։

Մին շենում մին դեր ա ինում, է՞, դեր։ Դերին էլ հարկավեր ա ինում, վեր ճորոմ հեաե փալան կարե։ Ճըրտրեցե էրկու ախպեր փալան կարող չն լլալ։ Փալան կըողին էլ մեր լեզվավը ասում ըն՝ փալանդուդ, լի, յանի քի՝ փալան կարող։ Էս փալանդուղներեն դերը ծեն ա տամ, պիրում ուրան տոնը։ Դերը քյեչան պիրում ա... փալանը քյչավ ըն կարում, է՞, քյեչան պիրում ա։ Վեր քյեչան պիրում ա, էլ ասում չի, ե՞, թա՝ ճյորուն հեաե լլավ փալան կարե, ասում ա.— Ուստա Կեերք, ինձ հեաե մին հանց փալան կկարիս, վեր Ղարարադումը տի փալան չինի։

Ասում ա.— Աշկես յրա, ա դեր, պա քու խաթիրը հու՞վ ա պեն ընանական։

Էա ախպորց անումը՝ մին Մարդի ա իլալ, մինը՝ Կեերք։ Քյեչան դերը պիրում ա վեր աինում, դրըկնդանն էլ ասում ա.— Ա կնեդ, թիվտ պեր, ուսաեննեքյը հանցու փալանը կարին։

Էն մին ջուռա հասաեդ թիվ կա, է՞, կրպեան մնացած։ Կարպեաը կյործում ըն, կարում, մին խիլա աեղ մնամ ա անկյործել, Ղարարաղում նըրան «առաջ» ըն ասում։ Ականո՞մ ըս. էա թիվին անումը Ղարարաղի լեզվավ առաջ ա։ Էա առաշին կծեդյը դիրակենը պիրում ա, աամ ուսաեն, է՞, փալանդուղեն, ասում ա— Ուստա Կեերք,— ասում ա,— «առաջս» լյավ «առաջ» ա, շատ քյոռլող չըասա։

Այսինքը՝ քիչ դործ ածիր։

Դե պյուդում ընք, լի, վեր Ղարարաղի լուղվավ «առաջը» օրիշ պեն էլ ա նշանակում։

Ասում ա.— Դրակեն,— դե ուսաան հու՞նց անե, կրակու մաշի ա,— ասում ա,— դերու փալան, դրըկնդան առաջ, փալանդուղու մախաթ, հունց անի՞մ, վեր շատ քյոռլող չտամ։

29. ՓԱՆԴԱՎ ԳՅՈՒՂԱՅԻՆ

Մին մարդ Աղդամ քյեցած ա ինում, կյամ ա։ Սարերավն ա կյամ, լի, էն վադան արանսպորտպեն չի իլալ։ Փյադա կյամ ա, թոխպ օր ա ինում։ Վեր կյամ ա, նիյ մնում ուրանց շենը, դյուդում ա, թա ուրանց հրևան շենումն ա։ Ասում ա. «Ա, հի՞նչ ըն դյուդում, յան ըմ ալական, էս աանը ղոնաղ ըղնիմ, քոն ինիմ, էքյուծ, ըրխըլին կքյնիմ լի, սաի՝ վեններս թրջված ա, էս հալին քյնում ըմ առն, հի՞նչ անիմ»։

Պցրանում ա, հղեցը կլխեն մին հայաթ նիյ մնում։ Նիյ ա մնում, աեսնում՝ անաաերնը կնեդյը սմավարը քցած. մթնժորած ա ինում, ասում ա.— Բաշի, ամալ չի կյա՞լ ուրուդյունս ձեր աանը ղոնաղ կենամ։

Կնեդյը եշում ա, աեսնում՝ ուրանց պելին ա, դյուդում ա, թա՝ ղարափաթ ա անում։—Ասում ա.— Պա, հի՞նչ ա ինական, ըշկրներես յրա աեղ օնիս։

Էա մարդը, ղաշանդյ, նիյ ա մնում առնը, փիչին ղրաղեն նսաում, վենները հանում, դյուլբեքը աինում փիչին աակեն։ Կնեդյն էլ ղղղանը պիրում ա, սմավարն ա պիրում։ Պիրում ա առն, լի, վեր էս ա՝ մարդը կյլական ա, հանցու ուրուդյունը հաց օաին։ Մարդը վար ընելիս ա ինում։ Մարդին անումն ել Բախշի ա ինում։ Բախշին հիյվրենեն աղվարում ա, պրծնում, կյամ առն։ Կյամ ա առն, աեսնում՝ ըհը՛, սյանըն դյողընա դյոնում, ուրանց պելին էն ա ուրանց փիչին ղրաղեն նսաած։

Ասում ա.— Պարի դյում, քեղ։

Աաի եշում ա, թա.— Պու՛, Բախշի պելի՞, աու սաեղ հինչ ըս անու՞մ, ես լհա Ըղղման ըմ կյամ։

Թա.— Դե, ես էլ առն ըմ եկալ, լի։ Հիյվրենեն աղվարալ ըմ, եկալ առն։

Էս վեր ասալ չի՞ «Հիյվրենեն աղվարալ ըմ, եկալ առն», դյիդացալ ա, վեր ինքյը էն ա ուրանց աանան մին աասնըհենդյ շադ աենը, պելուն աանը։ Ը՞ր ա կացալ սուսուփուս շալաքյուլան հվաքալ, քյեցալ առն, իրը թե՝ վեչ մին պեն էլ իլալ չի։

30. ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Մին սուրու մարդիքյ կոռա փախած կյամ ըն։ Դե, էն վըխաեն ադաթ ար լի կոռը։ Մորեխը եկալ ար, մոկունը եկալ ար... մհենդյու նման ադաթ չի եղալ քիմյական նյութերը՝ էս մինը, էն մինը... հանցու կուաորին, ախր եկալ ա, լի, եկալ ա կերալ, ժողովրդին սոված թողալ. մուկունը մինը աեղան, մորեխը մին աեղան։ Էն վախան էլ ադաթ ար, լի, ժողովուրդեն հըվաքալ ըն, աարալ. կոռ։ Մհենդյ, աի մին հենդյ-վեց հոդի կուռրաեղա փախած կյամ ըն. ուրանք էլ սոված, աուղնը, Նիկոլային վախաը հու՞վ ար նրանց հաց առվողը, մին պաաառ յուխա-մուխա ար՝ օաում ին, քյնում։

Կյամ ըն, կյամ, կյամ Ղղղալա հըսնում։ Դե թող լոխ էլ գիդան, վեր Ղղղալան մեր Ղարարաղա դյուղերից մինն ա, համ էլ ինդի խուաուրա դյուղ չի, 500 անաեսությունից բաղկացած ա, մաշին լյավ-

լյտվ մարդիկ կան, բայց փիս էլ կինի, լի· շեն կինի՞ վեր շոն չինի. տի էլ կինի։

Մհենդյ էտ հենդյ-վեց հոզին կոոա փախած կյամ ըն, Ղզզեն հղեցը զրտզեն մին տոն կա, տեսնում, լհա, սաի մին խոխա աբոանը վեննը, ասում ա.— Դայի, եկեքյ հաց կերեքը։

Տահանք էլ սոված, փոոնեն վեց-վեց ա անում, հյուլորում ըն, կյտմ։ Կյամ ըն տեսնում՝ հացը թխած, մին կարաս էլ բաքյմազ ա ինում, մին չրուքունհարե խոր կեաթ ա ինում, էա խոխտն բքյմազան նի ա օնում, սինում ըոբշներեն։ Թտզա հաց, բաքյմազ. վեր ինի վուչ, ինի վուչ՝ լհա մին թիքյան երկու հարուր գրամ յոր կօնե։ Օտում ըն, օտում, օաում... էա ղունըղներեն մինին ինսափ ա ինում, ասում ա.— Ա խոխեք, էտ խոխեն մաբը կկյա, կոեվ կանե, համոթ ա, եր կացեք քյնինք։ Բալա, էլ պիրում՝էր, միկտ էլ ծրղ հեաե պահե։

Ասում ա.— Չէ, է՞, դայի, իտի չի։

Թա.— Հը՞։

— Մեր կատուն ընդալ ա էտ բիքյմազին կտրասը, ստակալ, մունք օտում չընք, քյնող-կյուվողու ընք տամ։

Էա ղունըղներեն մինը շատ փիս սըրտմընա ինող ա ինում, լի, ղզվոզ, կյեվաթը տափսվն ա կյամ, Թա.— Շան ազա, մեզ էս հի՞նչ ըս արվալ։

Լյաց ա ինում էս խոխան, Թա.— Վա՜յ, էա վեր իմ մեծ այու կյուղամանը կոարալ ըս, հի՞նչու մաչի ա կյուզլական։

31. ՔԱՌԱՍՏԱՆՈՒՄ

Մին քստ մարդու մին խիլլա էծեր ա ինում։ Էա էծերը աանում ա, անում մին աեղավ, լի, վեր քյնին ըրածին։ Եսնան, ուրոսդյունը միշտ քիս ա ինում էա էծերը պիբիյիս։ Էտ էծերեն մաչին մինին պոզը կոտրած ինում ա։ Մհենդյ... էտ պոզը կոարածն էլ ա միշտ ըծերեն նհեա քյնում, լի։

Մին օր էս մարդին էծերը կյամ չըն տոն։ Քըյնում ա շոռ կյաս, տեսնում՝ մին մեծ մարդ վար ա անում։ Տու մի ասել՝ էս վար անոդն էլ ա քստ ինում, մուաանում ա, ասում.—Բարի օր։

Նա աեսնում ա վեր կլոխը տմբամրացրուց, պատասխանում ա, լի։

— Բարի օր, ասածու բարին։

Ասում ա.— Էծերս կուրցրալ ըմ, աեսալ չը՞ս։

Ասում ա.— Ստի, լոխ իմն տ մինչև ընդեղ, ստի վըրլական ըմ։

Սա դյոզդում ա թա՝ հրցնում ա. թա՝ մինչև հիշաե՞ղ ըս վըրլական։ Վեր սաի, ծերքավ նշանց ա տամ, նա էլ դյուդում ա, թա իծերեն տեղն ա տսում, շանց աամ ծերքավ։

Ասում ա.— Վեր էծերս ընդեղ ինին, էն ա մին պոզը կոտրածը կա, քեզ ըմ տլական։

Ասում ա, նշանց տված թուշավը քյնում, տեսնում, օնդատն ընդած, էծերը ընդեղ ըն, լի։ Էծերը քշում ա, պիրում, էն մին պոզը կոտրած էծին կընդակ մնացած պոզան փոնում, պիրում վեր տա էս վար ընոզեն, լի, հունց վեր խոստցալ ա, ասում ա.

— Տու վեր իմ իծերես տեղն ըսեցեր, կա՜, էա մին էծը քեզ ըմ ըախշում։

Ասում ա.— Էն աստուծը, Քյրիստոսը, էտ էծին պոզը ես չըմ կոտրտլ։ Գյուդում էլ չըմ, հուվ ա կոտրալ։

Ստեղ կոեվ ըն անում, դավի դարարա. աեսնում ըն, վեր զործը տոանց օրենք ամտլ չի կյլական։ Տու մի ասել՝ օրենքյին մարդն էլ ա քստ ինում, պեն չի կլիու ըզնում։ Փոնում ա էտ էծը յոր օնում ուրան, ասում.— Դե, տուք, քյեցեք։

Սահանք վեր օրենքյին մարդուն ծերքը աեսնում ըն, ուրուր նհետ բբըշած քյնում ըն՝ մինը մին տեղավ, մինը՝ մին. ըրխըյնացած, վեր՝ ուրուր լվուքուն ըրեն։

32. ՀԱՄԵՍՏ Ա., ԲԱՅՑ ՄՈՒՆԵԼԱՆ ԵՏԸ

Ինում ա, չնում մին մարդ, մին կնեդյ։ Էս մարդին կնեդյը, թա՞ ուրան սնա ա բողմիշ ինում, թա՝ մարդի՞ն անա ա բողմիշ ինում, մեոնում ա։ Հըվաքվում ըն ժողովուրդը, վեր թաղին։ Դե, խիլլա ժողովուրդ ա ինում թուի աեռած, հանց ուրվում ա՝ պատվավեր կնեդյ ա ինում։

Վեր օզում ըն թա թաղին, մինը մուաստնում ա էս կնդանը մարդին, կլոխ քցում. վեր ադաթ ա, թդեյիս տեզը մարդը կնդանը մին պեն, մին խոսք պիտի ասե. խե՞ սուս ըս կացալ։

Ասում ա.— Դե. հի՞նչ ըմ ասում, վեր ադաթ ա՝ ասիմ։

Էս մարդը՝ մոածեն մարդը, յըշիգյին կլոխն իյեր վըրնն ա կենում, պրծնում, ըսկսում խոսելը։ Կնդանը թարիփ ա անում, կյենդյատ ա տնում... էա թոդ ժողովուրդը գյիդա, բայց, դե, հենդյ ըոպե ա խոսում, տասը ըոպե ա խոսում, կես ժամ, մին ժամ... վերջը՝ կյամ ա մըթնըժորում ա։ Մհենդյ էն մարդը, վեր եկալ աը թա՝ խոսե, մուտանում ա, կյամ նորից քմտկան բիշաի աամ, ասում ա.— Բոլ ա, ե՜, մթնում ա, պրծեր, վըեզավ անինքյ, քյնինք առն։

Սա, թա ասում ա.— է՜, ա ժողովուրդ, վեր տուք դյիդաք իմ զարդս, է՜, տի նախատինք չըք տալ։ Կյանքումս, առաջին անքամն ա,— ասում ա,— վեր ես էսքան խոսում ըմ, ինքյը աի սուս ըրած, անդուռը կախ, դաշանդյ անդուռ ա օնում։

33. ԿՆԳԱՆ ՍԱԲԻՐԸ ԽԵՐ Ա, ԹԱ՞ ՇԱՌ

Մին մարդ ուոթանա քշերավ բուլի-բուլի ա կյամ, բաղար ա քյնում։ Լհա էտ վախտը կնեգյը սաբեբ ա կյամ։ Մարդն ասում ա.— Ա կնեգյ, ստ-բիբտ խե՞ր ա, թա՞ շառ։

Ասում ա.— Խեր ա, ա մարդ, արխային քյնի։

Քյնում ա Գյուլափլվեն* տակը, էս մարդին թլսնում ըն, ծին, պիոնը, շորերը լոխ տանում ըն, ինքյը մին թահրավ պրծնում ա, տկլոր կյամ տյուս կյամ տոն։ Դե ստի վախտը մարդը հու՞նց ա կըզնվում։ Կըզնված ա, հունց ա կըզնված, հինչ լեփ ասիս կնգանը կլխեն թափում ա. «Քու ստինն, ինդինը, քու տիերն ու տըվերը, քու քթըծտ-կերն ու... քու լյավն ու վատը, պտ ասում իր՝ սա-բիրս խեբ ա»։

Փոնում ա, թա մին լավ դմբղե, կնեգյն ասում ա.—Ա մարդ, խե՞յրս թակում։ Թա քեզ համար խեր չար, էն տնոզեն համար հու խե՞ր արա։

34. ԴՈՆԴԻ ԿՅՈՂԸ

Մին պահակ ա իլալ բղերեն յրա։ Եկալ աբ տոն, քյնցալ, աեսալ՝ բաղումը մինը կյոդուԹուն ա անում։ Թաքուն մուտանում ա փանդավ-փիլավ էտ կյոզեն փոնում։ Փոնում, վեննները կպոտում, վաղ տալավ կյամ կոլխոզեն նախադահեն կոշտը, թա, ասում ա.— Մին կյոդ ըմ փոնալ։

Թա, ասում ա.— Հի՞նչտեղ ա։

Թա.— Վեննները կպոտալ ըմ, էն ա բաղումը։

Թա.— Պտ, ծե՞րքերը։

Թա.— Պա՞ա... բայց վեչինչ, վեր իմ խելքը կտրալ չի ծերքերը կպոտիմ, ուրան խելքն էլ կըտ-ըլական չի վեննները ետ անե։

Քյնում ըն, տեսնում, իսկապես. հունցը վեն-ները կպոտալ ա, վեր քցալ բաղեն մաչին, տի ել վեր ընդած։ Փոնում ըն, վեննները պեց թողում, եր կցնում, քմակեն մին լյավ քացավ տամ, թա, դե.— Շան տղա, վեր խելքտ էտքան ա, ըիդի մեր կոդ-մերը էլ կյուղուԹունու կյաս վուչ։

35. ՀԱՐԲԵՑՈՂ ՊԱՀԵՍՏԱՊԵՏԸ

Մե հետ մին աշկը ծակ պահեստապետ ա ինում։ Էտ պահեստապետը ամեն դոնում արաղը-պենը պտնելիս տմեն մինին փայան մին ստա-քան, էրկու սաաքան խմում ա։ Կոլխոզնիկուհիներ-ան մինը՝ անումը Վարդանուշ, կյամ ա թա արա-ղը ստանա, էլ լհա պահեստապետը տա բտծնից յոր ա օնում, խմում։ Վերջը, հու՞նց անե, հի՞նչ անե. էտ կնեգյը մտածում ա, թա ասում ա՝ կոլ-խոզի վաբշոԹյանը դիմում ըմ տլական։ Դիմում ա տամ։ Մին օր նախադահը կանչում ա, թա էտ պահեստապետեն հարցը քննե։ Հիմա, նախադահն ասում ա, լի, վեր էս պահեստապետը ստի յա անում, սաի յա, բնդում ա տյուս քցենք։ Պահես-տապետը պենան սնաեղյակ, եկած ա ինում էտ ժողովին նստած. դյուդում չի, թա հինչ ըն քնն-կան։ Վեր նախագահն ամբիոնան քնած պահես-տապետեն ասում ա.— Արա, մին տրա կողքեն եբ, եր կենա, է՞, ախեր, տրա հարցն ընք քննում։

Վեր ստի կողքեն ըիշտի յա տամ, եր ա կե-նում, աշկերը ճմրթում, թա ասում ա.— Վար-դանուշ, մին-մին ածե՝ խմինք։

36. ՔԱՋԱԼԸ, ՔԱՌԸ, ՏԿԼՈՐ ՆԱՆ ՔՈՌԸ

Մի հետ մին քանե հոսի մին տեղ ըն ընգնում, տու մի ասել, սահանք լոխ շքյաստ ըն ինում, մինը՝ կլոխն ա ինում քաչալ, մինը տկլոր ա ինում, մինը քառ ա ինում, մինը քոռ ա ինում. վերջը, լոխ մին տեղ ըն ընգնում, քյնում։

Հղե քյնիյիս մին էլ բուրդան քառն ասում ա.— Արա, ընգուճավս մին սաս ընգալ։

Էս քոռն ասում ա.— Արա դյուզ ա, հնե՞յ, ուր-վամ ա, հանց ա կյալիս լի, հի՞նչ անինք։

Վեննը կարած մինն ինում ա, տսում ա.—Եկեք փախճինք։

Մին տկլոր մարդ էլ ինում ա, ասում ա.—Արա, պա, բալի կյան մեզ պլոկի՞ն։

Մինն էլ քաչալ ա ինում, ասում ա.—Պաա՞հ, մազերս բիզ-բիզ վեննը կացավ, հի՞նչ փիս վա-խում ըմ...

37. ՕՂՏԵՆ ՅՐԱ ՓՈԽԵՆՁ ՕՏԵԼԸ

Մին մարդ օղտեն յրա նստած հրդեհնի քյնում էր։ Ջուրումը փոխենձ աբ իլալ։ Ստի, փոխենձը հափոավ տյուս ա օնում, թա պերանը քցի, դրա-չան քամե ա փիչում՝ փոխենձը տանում։ Սա տյուս ա օնում, թա պերանը քիցի, փոխենձը քամեն տա-նում ա. էլ պերանը պեն չի ըղնում։

Էս վախտը մին մարդ տեման տյուս ա կյամ, թա.— Էտ հի՞նչ ըս օտում։

Թա.— Ստի վեր քյնի, համարյա թա վեշ մին պեն։

38. ՊԱՌԱՎ ՆԱՆ ՃՂՈՊՈՒՐԸ

Մին մեծ ընտանիք ա ինում։ Կրկենե ըն թխում, տինում մաչ տեղը։ Դե էտ ընտանիքում էլ համ մեծ կա, համ պիծի, համ միչնակ։ Կրկենեն օտում

* Գյուղ Ադր. ՍՍՀ Աղդամի շրջանում, որը գտնվում է շուկայի ճանապարհին (Ս. Կ.)։

ըն, կշտանում չըն։ Մին կաոր մնում տ։ Մտածում ըն, թա հո՞ւր տան։ Ասում ըն՝ պերեք մին կոռ ճղուպուր, հու վեր էտ ճղուպուր կոքներավ կոտրե, նա էլ կրկենեն օտե։ Որպես հարդանք առաչի հերթը տամ ըն պռավեն։ Դե, պառավ ա լի, անկեռեք, իննասոն աիրեկան պառավ, ճղուպուրը քցում ա կոքներեն տտկը՝ էս անդյունը քցում, էն անդյունը քցում, հոփ տամ, պեն չի տյուս կյամ։ Տամ ըն տան պիծինին։ Դե օխտը-օթը տիրեկտն տղա ա լի, տինում ա կոեքեն տակեն ճղուպուրը, հոփ տամ, կոտրում։ Կրկենեն տամ ըն տիրան։ Պառավը լյաց ա ինում։

— Ա պառավ, խե՞ լյաց ըս ինում։

— Պա ես փփկցրալ ըմ ճղուպուրը,— ասրմ ա,— նա կոարել ա. կրկենեն ինձ ա հսնում։

Կրկենեն տամ ըն պռավեն։

39. ԾԻԼԻՆ

Մինը քյեցալ ա դլլաքու ըռաչի նսաալ, վեր իրեսը վեր անե։ Իրեսը վեր ա անում, դե շաա ա տանջում, լի։ էտ մուշտարուն ճարը կտրում ա, ասում ա.— Ուսաա, ծիլին հի՞նչա ըն շինում։

Ասում ա.— Խե՞, գյուղում չը՞ս։

Թա.— Չէ։

Ասում ա.— Պուղվաաա ըն շինում, է՞, աղնիվ պուղվաաա։

Թա.— Հաա՞, յրս էլ ասիմ՝ խե՞ աշկերրս կրծըկրակ ա անում. է՞։

40. ՄԵՌՆՈՂ ԱՄՈՒՍՆՈՒ ՊԱՏՎԵՐԸ

Մի մարդ հիվընդանում ա։ Անց ա կենում մի իրեք օր, կլխու ա ինգյնում վեր էն ա, մեռնիլ ըիդի։

Կնգտնը կանչում ա, թա.— Ա կնեգյ, ես էս ա մեռնում ըմ, աու վէլ ջահիլ խոխա յրս, մարդու կքյնիս. համա Թեաթրոսին կքյնիս։ Նահա հետ սալդաթ ըմ իլալ, նահա հետ աշխատանք ըմ ըրալ, լյավ ջուվար ա, ինքն էլ հալա աղափ ա։

Կնեգյն ասում ա.—Դե էրկու օր կանուխ կըսիր, լի, էն ա մեկալ օրը Գուրգենեն խոսկ ըմ ավալ։

41. ՀՈՂԱԳՈՐԾՆ ՈՒ ՏՂԱՆ

Էրկու մարդ վար ընեյիս ին ինում։ Մինի խուփը կոտրվում ա։ Տղեն ասում ա.— Ադա, քյնի հրեվանեն խուփը պեր։

Ահմ ա.— Ապա, ախր նրանք էլ ըն վար անում։

Ահմ ա.— Ադա քյնի, լի, բալքյաս խելքը կըարում չի, տամ ա։

42. ՄՈԼԼԱ ՆԱՍՐԱԴԻՆ ՆԱՆ ԱՍՏՎԱԾԸ

Մին կեաում չայլաղ ա ինում։ Մոլլա Նասրադինը քյնում ա ստուծանա խնդրում, թա.— Աստված, էս չայլաղն ինձ տո, ես ստեղ կորեկ վարիմ, կհնձիմ, կես կանիմ քեղ նհետ։

Աստված չայլաղը աամ ա։ Մոլլա Նասրադինը կորեկ ա սերմում։ Ստի կետն իյեր խամխարա ար, վարում ա, սերմում՝ մին էրկու-իրեք փութ կորեկ շաղ աամ, սպասում։

Էս կորեկը փոնում ա. հի՞նչ կորեկ։ Հսնում ա։

Նասրադինն կնդանն ասում ա.— Եր կաց, քըյնինք, հնձինք։

Քյնում ըն, հնձում, պիրում կալսում։

Նասրադինը մտածում ա. «Աստված ինձ նհետ հրկաշոթուն ա ըրա՞լ, հի՞նչ ա դյուղում, թա հինչքան ըմ հվաքալ։ Մին էրկու պարկ յոր օնիմ, աանիմ, տամ եմիշի, պենի, տուդի-սուդի...»։

Էրկու պարկ յոր ա օնում, տանում մին մոշի քոլու մաչին պահում։ Մնացածը փայ ա տնում։ Կաղնե ղուրուվավը մին լցնում ա ըսաուծեն չվալը, մեծավը մին չափում ա՝ ուրան շվալը։

Մին քամե յա եր կացալ Ըրասխան, մին քամե, վեր սաի-սաի ցրեվ տ աամ։ Եր ա կենում Մոլլան լոխ հվաքում, թուի անում, մին էլ ա քամեն ցրեվ տամ։ Մին էլ ա եր կենում, հվաքում, թուի անում, մին էլ ա ցրեվ աամ։ Կընվում ա ըստծու յրա, կորեկը յոր օնում, քամուն ռեխը տամ, լոխ թափում, քյնում էն մոշի քոլան էն էրկու պարկն էլ տյուս օնում, շաղ աամ, կամները եղնանց յրա պեռնում, կյամ առն։

Կյամ ա տոն, կնեգյը հրցնում ա,

Թա.— Պա կորեկ հո՞ր ա։

Թա.— Ըստծու նհետ կռեվ ըմ ըրալ, կընվալ, աեն ածալ, ուրան ավալ։ Ախեր նրա նհետ սկի մեղր օտել էլ չի ինիլ, է՞, ես հու՞նց հրկըշոթուն անիմ։

43. ՄՈԼԼԱ ՆԱՍՐԱԴԻՆԻ ՅՈՐՂԱՆԸ

Մոլլա Նասրադինը աանը քոն իլած ա իլալ։ Տրսում ղլմաղալ ա ինում։

Եր ա կենում, աեսնտ հինչ ըլըկործում ա, խե՞ յըն ուրուր անավ ընդալ։

Ցորղանը շլակած այուս ա կյամ։ Ցորղանը ուսերան յոր ըն օնում, տանում. ըլըկործումը կըլխում ա։

Կնեգյն ասում ա.— Էն հի՞նչ ղլմաղալ ար։

— Ղլմղալը յուրղանեն յրա ար, յուրղանը աարան, ղլմաղալը վերջացավ։

44. ՊԸԼԸ-ՊՈՒՂՈՒՆ ԾԻՆ ԾԻԾԱՂՈՒՄ Ա

Մի անդամ Պըլը-Պուղի նան Մեղիքյ-Շահնաղարը քյնում ըն մի դյուղում ղոնաղ ըն ըղնում,

քշերը մնում ըսեղ՝ էտ գյուղումու Միերավ ըն քյեցած ինում։ Ախեր Պըլը-Պուղին միշտ Մելիքյ-Շահնազարեն կլխեն քյալագյ ար կյամ, մհենգյ։ ըստեղ Մելիքյ-Շահնազարը մաածում ա՝ Պըլը-Պուղուն կլխեն քյալագյ կյա։ Մելիքյ-Շահնազարը քշերտվ քյնում ա, նի մտնում կյումը, Պըլը-Պուղոն ծիլն քթրպոոշը վեր քաշում։ Հալա մթեն ա, լի, ուրվամ չի։ Մհենգյ տյուս ըն կյամ, ճանապարհվում ըն։ Վեր ճանապարհվում ըն, էտ Պըլը-Պուղին գուլյուղ ա ջհնամ, վեր Մելիքյ-Շահնազարը ուրան կլխեն քյալագյ ա եկտլ։ Ալլղա դոնում Պըլը-Պուղի, ինդի պիծի-պիծի քյնայիս, ծիան վեր կյա, Մելիքյ-Շահնազարեն ծիին հաքյին կտրե, կոխե ծիին քամակը։ Խիլա քյնում ըն. վեր տի քյնում Մելիքյ-Շահնազարը իրը թե մեծ կործ ա արած՝ գյաո-գյաո ասում ա.— Ա, Պըլը-Պուղի, ծիա, է՞, ծիծաղում ա։

Թա.— Մելիքյ-Շահնազար, գյուղում չը՞ս խե հինչավ ա ծիծաղում ծի՞ս։

Թա.— Չէ։

Ասում ա.— Քու ծիտ հաքյվան ա ծիծաղում։

Մելիքյ-Շահնազարը եա ա աեռնում, աեսնում՝ արա՝ էս շան վերթին կլխեն քյալագյ եկած, ասում ա.— Պ'ահ, քո առնը քանգվի Պուղի, էլ լհա տու իմ կլխեն քյալագյ եկե՞ր։

45. ՊԸԼԸ-ՊՈՒՂՈՒՆ ՂԶՂԱՆԸ

Օրերից մին օրումը... ծմեռն ա ինում, ցորտ-ծյուն... Մելիքյ-Շահնազարը Պըլը-Պուղուն ասում ա.— Քշերս, եթե մինչե լյուսը ակլոր տու գյուղումը կենաս, եքյուծ քյեզ օխար պեռնը ցորեն կաամ։

Թա, ասում ա.— Կկենամ։

Թա, տսում ա.— Կաց։

Արգեն վեր մթնում ա, Պըլը-Պուղին տկլորանում ա, ըստեղ՝ հայաթումը, մի շաա մեծ ըղրցաքար ա ինում... կյամ ա, է՞, էս քարեն նհեա տես հոռ-հոռ անում, տեն հոռ-հոռ անում, վեր աաք կենա, մրսե վուչ։ Էնքան հոռ-հոռ ա անում, վեր քրտնքում էլ ա գեռ։ Մինչև լյուսը իաի հուհոռ ա սնում տկլոր, լյուսանում ա։ Մելիքյ-Շահնազար քշերը, ղաթումը ագրավերկա ըրտծ ա ինում, ուռթանա էլ կյամ ա տեսնում՝ կացալ ա։ Ասում ա.— Պուղի, սաի ծմեռնը, ցուրա, ծյուն, պա աու հու՞նց ըս լյուսըցրալ։ Իսկի կրակ-պեն ըրալ չը՞ս, կամ մոաե կրակ-պեն աեսալ չը՞ս։

Թա.— Չէ, վեչ մին կրակ աեսալ չըմ, բայց հըոնացե՝ Ըրասխեն ղրաղեն մին հաա իշեղ ա ուրվացալ։

— Հաա՞,— ասում ա,— էն իշեղավն ըս թքացալ, քյեզ ցորեն-պեն չըմ աալու, էն իշեղը աեսալ ըս, յրան տքացալ։

Տեսնում ա, վեր Մելիքյ-Շահնազարը քյալագյ եկավ լի՝ ցորենը տամ չի։ Դե, ախրը, նա՝ Մելիքյ-Շահնազարը, ինքյն էլ՝ նրա նյոքյար, հի՞նչ ըրգի սնե. վեչ մին-պեն։ Բայց մտքումը պտհում ա Պուղին, ասում ա. «Մին ա, ես սրան քյալագյ ըմ կյալու»։

Շատ վեր տի ժամանակն անց ա կենում, վեր Մելիքյ-Շահնազարեն մննան անց տ կենում, մին օր կյամ ա Մելիքյ-Շահնազարեն թա, ասում ա.— Քու նաբիր-վեզիր հնգերունցա եր կալ, եկ մեր տոնը, լյավ պաղրասաություն ըմ աեսալ, օղում ըմ ծեզ մին լյավ ղոնաղ անիմ։ Համեցեք, ժամը էս հինչին... չորսեն-հենգյին մեր աանը կլինիք։

Մելիքյ-Շահնազարը քյնում ա ուրանց մեծամեծ հնգերունցը-պենին ասում. սաղ օրը հաց չըն սասում. իշտահ ըն պահում, վեր քյինին Պուղուն քաշած պաղրաստությունը սիրփին, օաին, ծիծաղին Պուղուն յրա։

Պըլը-Պուղին էլ տարսալ ա, էն ութաղումը կրակ ըրալ ըուխրիգյումը, ղզղանն էլ... էն ա, ինգի, հուրթ կա, ծոխը վեր տյուս ա կյամ... աարալ ղզղանն էչ հուրթտն կախ ըրալ։

Համան ուրան ասած ժամին էլ Մելիքյ-Շահնազարը ուրան մարգկանց հեա եկալ ա, էն ա խալիչան քցած, սուփրան քցած, դյոշակը քցած, նստոտում ըն։—Արա, Պուղի, դե պրծեր, եկալ ընք։

— Մելիքյ-Շահնազար,— ասում ա,— մի քյիչ սպասե, կյերակուրը իփած չի, իփի, սկսինք։

Էտ Մելիքյ-Շահնազարը թայգի ա աամ, Պըլը-Պուղին թա՝ սպասե՝ իփած չի, նա թայգի ա աամ, սա՝ սպասե, իփած չի, նա՝ պեր, սա՝ սպասե. ախրը, վերջը. «Արա, էս շան աղան վերջը օղում տ մեր կլխեն մին պեն կյա, քյնամ տեսնամ՝ էտ հի՞նչ խորագյ ա, վեր իփում չի»։ Քյնում ա, թա.— Հիշաե՞ղ ա, պա էտ խորագյը, հիշաե՞ղ ըս իփում։

Տանում ա, նշանց աամ, թա.— էն ա, է՞, ղզղանը, ըստեղ կրակ ըմ ըրալ, իփում չի։

—Արա,—ասում ա,— շան վերթի, ղզղանը տարալ ըս հուրթան կախ տվալ, ստեղ կրտկ ըս ըրալ, թա ասում ըս՝ իփում չի՞ կյերտկուրը, պա կիփի՞, տի պեն կինի՞։

Թա.— Վեր տի պեն չինի,— ահում ա,— Ըրասխեն ղրաղեն վեր մին կրակ ա իլալ, ես մեր աանը, էն կրական հու՞նց տքտցած կինիմ։*

46. ՊԸԼԸ-ՊՈՒՂՈՒ ՕԽՏԸ ՊԵՌՆԸ ՑՈՐԵՆԸ

Մելիքյ-Շահնազարեն մարը մեռնում ա։ Կյամ ա Պուղուն կոշաը, թա.

---

* Ղարարաղում ասացվածք կա. Սարքալ ըս Պուղուն ղզղանը (Ս. Բ.)։

— Պուղի, իմ մար մեռալ ա, դյուդում ըմ վեր տու էլ ըս ընդեզ իննական, ինձ ծծզցնիս վուշ. կըկենաս, վեր իմ մար կթազին, վերշտպես սոքյըպենը անց կենա, նանա ետնը հինչ օզում ըս՝ ըրա. օխտը պեռնը քյեզ ցորեն ըմ աալու։

Թա, ասում ա.— Լյավ, հինչ ըմ ասում։

Մարը վեր տանում ըն, տինում ժամումը, վեր... առաջ մեռալը ժամն ին տանում, ետնան՝ ժամից առանում թազում... մարը վեր յոր ըն օնում, պիրում, ժամումը տինում, ըտեզից վեր տանեն, թազեն, ալլղա դոնում Պըլը-Պուղին, օխտը շոն ա ճարում, մըշուկնեն շներեն յրա պընդրցնում, կյամ, ժամեն տոնը կտրում, թա, ասում ա.—Մելիքյ-Շահնազար, էն ցորենը մհենդյ տոր, թա չէ՝ վեր քու մար տանիս թազիս, տալու չըս՝ խփիլու ըս։

Թա, դե.— Ժամանտկ չկա,— մին զապիսկա ա կյիրում մին բադյու յրա, թա. «Պըլըպուղին զարկում ըմ, օխտը պեռնը սառնը կտաս»։ Ամեռն ա ինում։

Էս զապիսկտն տամ ա Պուզուն, թա.— Կքյնաս էն բադյին կոշտը, օխտը պեռնը քյեզ ցորեն ա տալու։

Պըլը-Պուղին տանում ա էտ զապիսկան կրթըցնում, տեսնում՝ կյիրած, վեր. «Պուզուն զարկում ըմ, օխտը պեռնը սառն կտաս»։ Դե տակեն ամիս տմստթիվ չի ինում կյիրած, լհա ծերք քաշած ա ինում. «Մելիքյ-Շահնազարս»։

Վեր կրթցնում ա, աեսնում՝ տի յա, ալլղա դոնում Պուղի, կենում ա ծմեռնը, կյարունքը անց ա կենում, կյամ ա հուլիս-հոդոսառոը, էն տաք վադան, էտ զապիսկան յոր ա օնում, քյնում էտ բադյին կոշտը, թա տառում ա.

— Դե, բադյը սաղ ինի, Մելիքյ-Շահնազարը էս զապիսկան տվալ տ, վեր քյզանա օխտը պեռնը սառնը բիդի տանինք։

Արա, կարդում ա, դյուզ, Մելիքյ-Շահնազարն ա, լի։ Էտ մարդը մնամ ա տափերը պուք տայիս. արա, էս մարդը կյիժվա՞լ ա, հինչ ա՞, էս հոդոստոսումը ես օխտը պեռնը սառնը հիշտզա՞ քթենամ...

Ասում ա.— Պուղի, ջանս քյե մատաղ, սառնը ես կարել չեմ ճարիմ, օխտը պեռնը ցորեն կտամ, թաքյի յախաս տանա ազտրիս։

Թա, ասում ա.— Վեչինչ, տու տիյ ըրա, ես Մելիքյ-Շահնազարեն նհետ էա դործերը մին կյերպ կդյուզմցնիմ։

Պիրում տ, օխտը պեռնը ցորենը տամ, Պըլը-Պուղին էշերը պըռնոտում ա, պիրում տոն։ Ջտվը ըզնում ա, թա՝ Պուղին օխտը պեռնը ցորեն ա պիրալ, Մելիքյ-Շահնազարը կյամ ա, թա.—Ա, Պուղի, էտ հի՞նչ ցորեն ա, հի՞նչ զատ ա, հիշտզա՞յա։

Թա ասում ա.— Էն վեր զապիսկան կյրալ ըս, թա քյնիմ օխտը պեռնը սառնը պիրիմ, է՞, քյեցալ ըմ՝ սառնը իլալ չի, եր ա կալալ, օխտը պեռնը ցորեն տվալ։

47. ՊԸԼԸ-ՊՈՒՂՈՒՆ ԷՇԸ

Պուղին էշը եր իլած քյնում ա, մտնում ժամը։

Դերը կյամ ա.— Ա, մեռած, տ փչացած, պտ էշավը ժամ կմտնի՞ն, պա տի պեն կինի՞։

Ասում ա.— Գյուղո՞մ ըս, ա դեր, Քրիսառոը,— ասում ա,—էն վեր էշավ ա իլալ, է՞, աշխարհը ման կյտյիս, էս էշը համան Քրիստոսի էն էշին քոռակն ա,— ասում ա։

— Հա, թա վեր տիյ տ,— դերն ա ասում,— էս էշավը կարելի ա ժամ կյալը։

48. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵՆ ՔԵԹԸ

Մելիքյ-Շահնազարը մին օր հրսանեքյ քյնիլի ա ինում, լի. դե դյուդում ա, վեր էտ հրսանեքյը Պըլը-Պուղին էլ ա քյննական։ Մելիքյ-Շահնազարեն քեթը շատ մեծ ա ինում։ Մհենդյ Պըլը-Պուղուն պիրում ա էրկու շահի տամ, թա ասում ա.— Պըլը-Պուղի, տու ինիս՝ էն աստուծը, էն հրթենքումը իմ քթես անումը տաս վեչ։

Թա, ասում ա.—Լյավ, աալ չըմ։ Ըրխըդին կաց։

Մհենդյ Մելիքյ-Շահնազարը քյնում ա հրսանեքյ, Պըլը-Պուղին էլ տ քյնում հրսանեքյ, հրթենքեն էն դյուտ ժամանակը, էն ա ինում Մելիքյ-Շահնազարը մեծամեծերեն նհետ նստած, քեթը կյրմրած, սառաստ ցեց ըրած, ասում ըն, խոսում ըն, ծծզոտում ըն։ Պըլը-Պուղին քյնում ա, մուտանում, տյուս օնում էն էրկու շահին, շպրտում, քցում Մելիքյ-Շահնազարեն առաջը, թա.

— Կա՞, քու էրկու շահին քյեդ ինի, ես կարել չըմ փորումս պահիմ. քթետ հալը հալ չի։

49. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵՆ ԲԱԶԵՆ

Մելիք-Շահնազարեն անդուռ ը՞ք ընում, Մելիք-Շահնազարեն մին զուշ ա լյալ, է՞, մին զուշ, բազե։ Էդ բազեն վերերսկան բազե տ լյալ, է՞, վերերսկտն բազե։

Մե հետ Պըլը-Պուղին կյամ ա թա.— Մելիք, բազետ ինձ տու, տանիմ վերս։

Էս Մելիքն ասում ա.— Տար, ամա կյաս վուշ ասիս՝ բազեն բուրդան սաակալ ա։ Տամ ա։

Տտնում տ, վերշը, էտ զուշը պեց թոզում, թըխում ա մին կրծուկոտու, տտակում։ Մհենդյ ասում ա, ես հու՞նց քյնիմ ասիմ՝ սաակալ ա։ Կյամ ա, տսում ա.— Դե, Մելիքն տպրտած կենա, բազետ վեները լախ ա ըրալ, թեերը չախ ըրալ, կլոխը կախ ըրալ։ Էլ ասում չի, թա ստակալ ա։

50. ՏԻԿՐԱՆԻ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Տիկրանը սաի ա ասում։

Ասում ա.— Էն վեր ասում ըն՝ էն ա արքայություն-էլաա կա, հվատում՞ ըբ,— Տիկրանն ա ասում։

Ասում ըմ.— Դե, ես քյեցալ չեմ ընդեղ, վեր գիդամ. յա կա, յա կա ուչ։

Պարանց ա ըղնում, աշկերը հոփ օնում, թա.— Աշխարհքս աեսնու՞մ ըմ։

Ասում ըմ.— Չէ։

Թա, պա,— Վեր վեղան էլ փորես ածին, կաեսնա՞մ աափեն աակեն։

Ասում ըմ.— Չէ։

— Դե նանա աենը հիշաե՞ղ ըիդիմ քյոնական։

51. ՏԻԿՐԱՆԸ ՔԱՂԱՔԸ ՉԻ ՍԻՐՈՒՄ

Արունց Տիկրանը քյնում ա Բաքու։ Դե քուլեցե մարդ, լի, պարև-պարիլյուսին սվեր։ Քաղաքումը մին օր էլ չի կենում, փախած կյամ ա։

— Աա Տիկրան, յաղու՞ղ ճելի եկալ ըս։

Թա.— Էն ղրեռ քաղաքումը վեր ինձ մին պարի լույս ասող չկա, կենում ըմ հի՞նչ անիմ։

52. ՏԻԿՐԱՆ ՆԱՆ ԲԺԻՇԿ ՆՈՐԻԿԸ

Տիկրանն էշին նսաած ըիդի Նոր շենն ար քյնում։ Ճանապարհին պաահում ա բժիշկ Նորիկը, ասում ա.— Դոխաուր, մին վենը կաց։

Նորիկը վենն ա կենում, Տիկրանը էշը քշում ա Նորիկան մուաանում։

— Դոխաուր, էշը խելք օնե՞։

Նորիկն ասում ա.— Չէ, Տիկրան դայի, էշին խելքը հիշաղա յա՞։

— Ասում ըս՝ խելք չօնե, դե եշի։

— Ասում ա,— Զո՛ւ- չմ՛ւ,— էշը աեղան այուրուր չի կյամ։

Մին էլ ա չու ասում, վրններավ փորեն աալեն քցը-քացի անում՝ կամանց-կամանց քյնամ ա էշը։

Ասում ա.— Դոխաուր, մուաաց։

Նորիկը մուաանում ա, Տիկրանն էշին ընդաճին ա ըղնում, մին պիծի ասում.— Թո՛ քշ։

Էշը վենն ա կենում։ Ասում ա.— Վեր խելք չօնե, պա հիշաղա յա դյուդում՝ վե՞րն ա ուրան օքուար, վե՞ըը՝ վնասը. վե՞ըը լյավ, վե՞ըը փիս։

53. ՏԻԿՐԱՆԻ ԷՇ ՆԱՆ ՄԱՇԻՆԸ

Տիկրանը էշին նսաած հղե քյնայիս ա փնում։ Մաշինը կյամ ա, թող ինիլավ Տիկրանին աալիս, առաջ ընդյնում քյնում։

Տիկրանը էշից եր ա կյամ, թքում, եշում դրի երգյինքը ու մի էյավ ուշունց աամ։

— Տիկրան, հի՞նչ ա պդահալ,— հրցնում ա մի շենացի։

— Արա, ասսուն ըմ ուշունց տամ, մին նրա ստեղծածին էլ եշի,— նշանց ա աամ ուրան էշը,— մարթու ստեղծածին էլ,—նշանց ա աամ մաշինը։

54. ՏԻԿՐԱՆԸ ՀՈՆՁ Ա ԱՆՈՒՄ

Տիկրանը հոնձ ընեյիս ա ինում։ Ջահիլները մոտանում ըն, եշում, ասըմ.— Տիկրան, հինչ լյա՞վ սոր չին ա չինըտ։

Տիկրանը նըղսնում ա, չինը շպրտում, քցում արաին մաչը, թա.

— Տե չինը թող ինքը-ինքը հընձի։

55. ՏԻԿՐԱՆ ՆԱՆ ՇՈՆԸ

Գյուղացիներից մարդ են ղարկում Տիկրանի առն, վեր Տիկրանին կանչի։ Էա մարդը կյամ ա բանդումը կաղնում, կանչում.

— Տիկրան, հե՞ Տիկրան...

Տիկրանեն շոնը սկսում ա հաչիլ։ Տիկրանը այուս ա կյամ, շոնը ավելի պինդ ա հաչում։ Տիկրանը շան յրա նըղանում ա, շոռ աամ առն մանըմ։ Մարդը էլհա յա կանչըմ.

— Տիկրան, հե՞ Տիկրան...

Շոնը էլհա յա հաչում։ Տիկրանը էլի այուս կյամ, շանը ասում.

— Տիկրանը աու վը՞ս, դե վըը աու վըս, ղողարը աոր։

56. ՋԱՓԱՐԸ ԿՆԱՄԵԾԱՐ

Ջափարը օղում ա քյնի Ալդամ, բաղաը։ Շինդունց Շինդին օղում ա կնդանն էլ ղարկե՝ Վաթուն։ Կյամ ա Ջափարին, թա.— Նեղություն չի՞ ինի, վեր մեր կնեդյն էլ աինիմ քրդ նհեա։

Ջափարն ասում ա.— Շելակս վեր կնեդյ ինի, մինչև Ղզբրեռդի* փիյադա կքյնիմ։ Տա նեղություն ա՞։

57. ԿԻԿԱՆԱՆՑ ՆԵՍԻՆ ՆԱՆ ՇՈՒՔՅՈՒՐԸ

Մին թոռ օր Կիկանանց Նեսին ծառեն աակեն կրակ ար ըրալ, աքանում ար։ Շուքյուրը, հարուր արեկան մարդ, կյամ ա, աեսնում՝ Նեսին ծառին աակեն կրակ ըրած։

Թա.— Նեսի, ծառը մեղք ա, խե՞ պաաառ աենը չըս կրակն ըրալ։

---

* Բանասացի ընակավայրից 100 կմ հեռավորության վրա գտնվող գյուղ է, մտնում է Ադր. ՍՍՀ կազմի մեջ (Ս. Կ.)։

Նեսին եշում ա, տեսնում՝ ծառը ծոռ, դասաի չողարը տամ ա.

— Տակեն կրակ ըմ ըրալ, վեր ծառը փիկե, դյուղըցնիմ. ծոռ պենը սիրում չըմ։

58. ՂԱՎԱՆԴԸ ԵՐԵԽԱՅԻՑ ԴԱՍ Է ՎԵՐՑՆՈՒՄ

Ղավանդը քյնում ա մին առն ղոնաղ. պիրում ըն ըռաշկին մի կա մեղր էլ տինում, մի կա եղ էլ աինում, մի աալերքում մի խիլա էլ մաչ ըրած ճուղուպուր աինում, վեր Ղավանդն օտե։ Ղավանդը դյուղում չի, էս հունց բ,ինդի օտե։ Սաի՝ Կոլուն նման մին խոխա ա ինում, կուռնան փռնում ա պիրում, թա՝ եկ, հաց օաինք։ Կյամ աւ Ղավանդը եշում ա, աեսնում, վեր էս խոխան ճուղպորեն կըեռեք եր կալավ, եղան թաթախ ըրավ, ասա էլ աարավ մեղրան թաթախ ըրավ, պերավ կեբրավ։ Ետնան՝ խուխեն կուռնան փռնում ա, թա դե, ասում ա.— Եր կաց քյնի, ըոլ ա։

Արթեն օաելը սովերալ ա, է՞։

59. ԸՎՆԵՍԱՆՑ ԿՈՒՔԻՆ

Ըվնեսանց Կուքին Ըղդամեն բաղարը քյնիյիս ա ինում։ Դե բաղարը քշերն ին քյնում։ Քյնում աը էշին նսաած։ Հվտքվում ըն ժողովուրդը էտ մոաե շընարկներան՝ Աշանա, Նորշենա, Հացվա, Ավդուռա, Մյուրուշենա*։ Էն մինը, էն մինը...

Կուքին դե լյավ լյուլու օներ, բայց ծոռ-ծոռ վեններ։ Մորուց ա աի ծնվալ՝ ծըխըծոռ։

Մինչև լյուսանալը էս Կուքին խոսում ա։ Դե մեր շնացիք ուրան ճինանչում ըն, ամա հրևվան շընտրկնեցեք դյուդում չըն։ Մաածում ըն «Այ էր, էս հու՞վ ա, հի՞նչ մարդ ա, վեր սաի քամակը կտրում չի, էյղանան խոսում ա, վեչ էլ էշան ա վեր կյամ»։

Ուռթանան վեր լյուսանում ա, լոխ մին-մին կյամ ըն, եշում... Դե ինվալիդ մարդ ա, լի, վեննները ծոռ-ծոռ։ Եշում ըն իրեսեն, եշում վեննեբեն... Էս Կուքին վեչ աանե, վեչ պիրի, ասե.— Ա հի՞նչ ըք վընները եշում, էս պնըտակու վեններ ա, լյավ-լյավը թողալ ըմ աանը, թա հվաառում չըք՝ եկեք մեր տոն, նշանց աամ։

60. ՄԻՆ ԴԱԼԼԱՔ Ա ԻԼԱԼ

Մին առըհաչ դալլաք ա իլալ, լի։ Մինը չիլալ, է՞, էրկուսն ըն իլալ. մինը Պեարուան ա իլալ, մինն էլ դալլաք Արտաշը։ Լհա ինդի շենումը ուրանց հետե կործ ըն անում, լի։

Մհենդյ մի Ծուկանանց Գիրիշ կա, աահանց յրա մին ռաանավոր ա կյիրալ. լոխ մըտես չի, լհա ինդի մին էրկու պեն մննաս ըղնում չի։

Ասալ ա.

— Դալաք Պարուսեն ու մեր Ըրաաշին,
Օնին մին ծիլի ու մին մաշին,
Հիբը թրաշվում ա Ալոն,
Վեչ բուդրի ըն քսում,
Վեչ էլ ադիկալոն։
Ամմա վեր թրաշվում ա նախադան կոլխողի,
Բուդրի ըն քսում՝ հինչքան սերաը կօղի։

61. ԲՈՒԴԻՆ ՀՕՐ ԳՆՐԵՋՄԱՆԻՆ ՔԱՐ ՉԻ ԳՑՈՒՄ

Բուդուն ասալ ըն.— Բուդի, խե՞ քա հոր յրան քար չը՞ս քցում։

Ասալ ա.— Իմ հար հի՞նչ ա դյուդում, թե ես սաղ ըմ։

62. ԲՈՒԴԻՆ ՀՐԱՃԱՐՎՈՒՄ Է ԳԵՐԵՋՄԱՆԱՏԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՇԻՆԵԼՈՒՑ

Էս Սարդսյան Կրիքորը (դյուղսովեաի նախագահը) եա ա աեռալ թա.— Բուդի, խե՞ կյամ չըս էս հղեն շինինք։

Էս Բուդին ասում ա.— Ինձ հղե չի հաշաթ։

Կրիքորն ասում ա.— Բալամ, վեր քյեղ հղե չի հաշաթ, վեր մեռնիս, հու՞նց ըն քյեղ աննական հանդիսաը։

Թա.— Հուվ վեր ինձ տննական ա, նա էլ թող քյնի, հղեն շինի։

63. ՀԱՂՈՂ ԾԱԽՈՂԸ

Մին մարդ քյնում ա բաղարը, տեսնում՝ ըաեղ մին հանղող ծախող էրկու քթոց հաղող աիրած ծըխեիս ա նյում։

Ասում ա.— Հի՞նչ կինի, մին իրեք մանեթ աամ, քաշես վեչ, թողես իրեք մանեթի հաղող ուաեմ։

Ասում ա.— Լյավ կինի։

Տա ընդյնում ա մի քթոցի յրա, ուաում, հրսցնում տակը։

Հաղողաաերն ասում ա.— Արա, մի քիչ մարդավարի կեր։

Ասում ա.— Էս մի քթոցը մարդավարի չկերա, էն մեկը մարդավարի կուտեմ։

64. ՄՈՌԱՑՎԱԾ ՀԱՐՍԱՆՔԱԿԱՆՉ

Հրսանեքյ ա ինում, կյամ ըն Դավութ ապոր տունը թա.— Դավութ, եք քյնինք հրսանեքյ։

* Հարևան գյուղեր ԼՂԻՄ Մարտունու շրջանում (Ե. Կ.)։

Թա.— Հու՞նց կյամ, մեղ կանչալ չըն։

Թա.— Արա, հրանքատերը շաղված կինի՝ մընանան քցած, վեր կանչալ չի· եր կաց, քյնանք։

65. ԱՌՈՒՍՏԱՄ ԴԱՅՈՒ ՁԻՈՒ ԿՏԱԿԸ

Աշոա Առստամիչի հոր ծին սատկում ա։ Դե, ժողովուրդան էլ միշա օղում ըն ուրուր մի քյալագյ կյան, ուրխանան։ Ջորս հոքով հվաքվում ըն, թա՝ քյնանք ասինք՝ ծիտ սատկալ ա, ըստուծանավ մխիթարվիս, համ էլ՝ մին-մին արաղ կտա, կխմինք, լի։

Քյնում ըն Առուսաամ գայու կոշտը։

Թա.— Առուստամ գայի, ծիտ անվախա սատկալ ա, ըստուծանավ մխիթարվիս։

Թա.— Հա, շատ ապրիք, բայց օղորմածիկը ստկեյիս մին վասյաթ ա ըրալ, մին կտակ ա թողալ, ճար չկա՝ ըիդի կաաարիմ։

Թա.— Հի՞նչ։

Թա ասալ ա.— Կըռքնես կտաք Սիմոնեն. (Սիմոնեն կըռքներ չի իլալ), հալավս կտաք Կարապետեն. (նրա կյեցն էլ շոր չի իլալ), շիլավս կաաք Հըյկագեն. (սա էլ քյալտգյող ա ինում), չուվանս էլ կտանք Առրքյելեն. թող մին լյավ ուրխանան։ Դե եկեք, ամեգյը ծեր բաժինը տամ, քյեցեք։

66. ԱՌՈՒՍՏԱՄ ԴԱՅՈՒ ՄԱՏԱՂԸ

Մին Դրղանց Առուսաամ գայի ա ինում, արա մին պելի ա ինում։ Էս պելին մին լյավ, Ղարարաղու վեխճար օներ, շատ ին օգում, վեր մորթե էս վըխճարը, մսու պակաս աարե ար, կոնյա մի թիքյա մես օաին։ Բայց էս պելին համաձայնվում չի, որովհետև մին աղա օնե կորած, խոսաացալ ա վեխճարը էնքան պահե, վեր տղան կյա, մաաաղ անե։ Էս պելին շաա հավատացյալ մարդ ա ինում, անունն էլ Ավագյում ա ինում։ Դե, Ավագյումը հավաաացյալ, էս Առուսաամն էլ լոթի, ծերք չի քաշում։ Մես ուտելու իշաահը խե՞ կարքին պեցվալ ա։ Ա, էս հու՞նց անե, հի՞նչ անե, վերջը շաա վեր մաածում ա, փանդը քթենում ա.— Մորթե, այ Ավագյում։

— Չէ, Առուստամ, Աթանեսը (տղան) կյալ ըիդի, վեր մորթիմ. մատաղ ա։

Ուրուգյունը, գյուգում չըմ, թա հիշաղա, մին ռեղինի շլանգ ա յոր օնում էս Առուսաամը, էրկան շլանգ, քյնում Ավագյում դտյուն տոնը։ Ավագյում գտյին բալկոնեն քոն իլած ա ինում կնգանը նհետ։ Էս շլանգը տինում ա, փադի կրավաթ ա ինում, էտ կրվաթեն յրա պարանց ընգած Ավագյումեն պերցին աակեն սկսում խոսել, թա.— Ես Մեծ Նհատակն ըմ, եկալ ըմ, բեգում ա էա մատաղ վեխճարը պիրիս, կլխավս շոռ աաս, տանիս, մորթիս, մին բուդը ղարկիս Դրղանց Առուստամե հետե, ուրան մատաղ։ Մնացածը՝ վընընպեպեգյ, ժողովուրդին փայ ըս անում։ Աթանեսն էլ ճելի կղարկիմ, վեչինչ, կկյա։

Տի ասում ա, Առստամը շլանգը քաշում, յոր օնում, քյնում։

Ավագյումը կնգանն ասում ա.— Ախճի, սկացե՞ր։

— Հինչ ա, ագա...

Թա.— Պա Մեծ Նհաաակը եկալ ա, թա՝ ղոչը բեգում ա պիրիս կլխավս շոռ աաս, մորթիս, մին բուդը ղարկիս Դրղանց Առուստամեն, մնացածը վընընպեպեգյ պիժենիս։

Քշերսավ եր ըն կենում, տանում սորփավը շոռ տում, պիրում մորթում, բուդը ղարկում Դրղանց առնը, մնացածը ժողովրդին փայ անում։

Դե մհենգյ թա ասաուծանա ա, թա հինչ ա, կորած աղան՝ Աթանեսը առն ա կյամ։

67. ՀԱՅԵՑՈՒ ԷՇԸ

Մե հետ մին հըցեցե ըիձա ուրան թամրալ էշը յոր ա օնում, աանում, թա Աղգամ ծախե, աեղը մին քյոհլան էշ ինքյ օնե, յոր օնե, կյա։ Էա մարդը յոր ա օնում էշը, քյնում բաղար։ Մին ինքյ օնող կյամ ա, թա՝ ա գայի, հինչքա՞նավ ըս ծախում։ Թա, ասում ա՝ գե երեսուն մանեթ տոք, քյե աամ։ Վերջը, աես-աեն, էն էլ մին պաաառ ժուլիկ խալխ ա ինում լի, ասում ա՝ մին պաաառ իժան առ, ինքյ օնիմ։ Քսանհինգյ մանեթավ էշը դյուղըցնում ա։ Էշը գյուգըցնում ա, տանում, մին թաքոմ աեղ էա էշին յալը խողում, պրծնում, փալանն էլ փոխում, պիրում՝ ա՜յ մուշաարի ա՜յ մուշտարի... հա մննաս ընգավ ասիմ, վեր էս մարդը էշին քոռակը քցած ա ինում կյումը, ասում ա՝ թող քոռակը կենա, կմեծանա, աանիմ, ծախիմ փող շինիմ, լի, ախրը։

Վերջը, կյամ ա, աեսնում՝ համին թորքը, բայց ինքը ճինանչում չի իրա մուշաարուն, ասում ա՝ էշ ըմ ծախում, էշ ըմ ծախում։ Աա ասում ա.— Արա հինչքանա՞վ ըս ծախում։

Թա, ասում ա.— Դե վացցոն մընեթավ ըմ ծըխըլական։

Տես-տեն, վացուն մանեթ ա տամ, ուրան էշը վերջը ինքյը օնում։ Ասում ա՝ թոկաց պաաառ քշիմ տեսնամ՝ թա քյոհլան ա, հանցու յոր օնիմ։ Պատառ տես քշում, աեն քշում, տու մի ասեր՝ էտ էշին օշը-խելքը էն ա ինում քոռակեն յրա, սեխ քյնում ա։ Էս մարդն ասում ա՝ էս ա, վեր կա, քյոհլան էլ ա, խալիս իմ էշ ա, տանիմ, պինըցնիմ։ Հախը աամ ա, յոր օնում, կյամ։ Հըղղենի

էշը ղսբաղու նման կյամ ա առն։ Կյամ ա առն, կնդանն ասում ա.— Ա կնեդյ, մին թաղա էշ ըմ իսքյ կալալ, մին եկ, աես հու՞նց էշ տ։

Կնեդյը կյամ ա, էտ էշին քըմական եշում, ըռաշան եշում, ահում ա.— Քա հոր կլոխը քյուլիմ, ադա, էս մեր էշն ա, է՞։

Ասում ա.— Տի պեն չինիլ, աեհում չըս վեր էն էս մեր էշը չի, մեր էշը թամրալ ա իլալ, էս՝ հանց ա ղսրաղ ինի։

Ասում ա.— Քու հար մեռնե, է՞, էն ա քոռակը ընդեղ կապած, նա դարդան ա ինդի սեխ եկալ։

68. ԽՆՈՒՇՆԿԵՑՈՒ ԿԱՎԻՆ ՇՈՒ ԿՑԱԼԸ

Մին խնուշնկեցու կավը կորչում ա։ Ուբուդյունը խաբարը կյամ ա, թա՝ ծեր կավը կորալ ա։ Խնուշնկեցին վեր ա ընցնում, սկսում կվեն շոռ կյալը։ Սին ժամ, էրկու ժամ վվեն շոռ ա կյամ. եսավ ծեն ըն սամ, թա.— Աբա, կավը եկալ ա, եկ առն։ Թա.— Սպասե, սաեղ մին կյումասեղ կա, ընդեղ էլ նի կյամ, կյամ։

69. ՀԱՐԹՆԸ ՓԱՀՎԱՆ

Հցեցե մին մարդու աղա բանակում ծառայիս տ ինում, ժամանակը թամամում ա, հեռադիր ա սամ, վեր կյամ ըմ առն։ Դե կյամ ա՝ կյամ ա լի. ուրախություն տես-տեն, վերջը, հինչու վերե ա, կյամ ա։ Կյամ ա, բայց մինակ չի կյամ, նհեաը մին կնեդյ ա պիրում։ Դե պիրում ա՝ պիրում ա, լի, վեր պերալ ա՝ քմակեն չը՞ն կյլական, թա՝ եա աեռ, քյնի ծեր առնը։ Վերջը, ըսեղ էտ ուրուդյունը շաա ուրախանում ըն։ Ըռավետ քշերավ հարթնը պարունան շուա ա եր կենում, պարունեն աշկերը մնամ ա խլշած. «Էս լհա կարդեն պեն ա, էս ա եր ա կացալ ինձ քյոմադյ ա ընանական, հայաթը-պենը սրփի, ճյուր պերի, ուաելի սես-սեն շինի. էս հիշ լյավ պեն տ»։ Հարթնը եր ա կենում, մայկա-առուսիկ կենում, էլ ատում չի թա կողկեն մեծ ու պիծի կա, սաի վազ սամ, ինդի վազ սամ, լոք սամ, եր կենում, կլըպնդրեդյի սամ... Ֆիղկուլաուրա ա անում։ Պաարտնը եշում ա, եշում, ամեն լոք սալու նհեա թաթը աչ-ծեխ սանում, թա՝ մաշալլա, մաշալլա, մաշալլա... Հյաթան ծեն ա տամ աղեն.— Արա, շան աղա, քու սաինն-ինդինը, աու հարթն ըս պերա՞լ, թա՞ փահլըվան։

70. ԷՇԻՆ ՔՈՌԱԿ ՆԱՆ ՂՈՆԱՂԸ

Էս պենը վեշ թա քաթ ա, իսկ ե իսկ իլած պեն ա։ Ղարաբաղ մին շեն կա, անըմը Ավդուու։ Հումց ա պտահում մին թաարեն տվողներեն խումբ կյամ ա էս շենը։

Թաարտնը պրծնում ա թա չէ՝ դերասաններեն ամեն մինին սամ ըն մին սան ղոնաղ։

Մին դերասան էլ սամ ըն Վանունց Հաբուն։ Հաբին ղոնաղը յոր օնում, կյամ առն։ Լյավ օսում ըն, խմում, պրծնում, միկա ղրուց անըմ, Հաբրն ուրան հարթնանը ասըմ ա.— Ա հարթն, ղարիբ մարդ ա, ճյուր պեր, ղոնաղեն վենները լվաց, հիշտեղ ուրան քեփն ա՝ թող քոն ինի։

Էս ջահիլ հարսանը մարդը քեցած ա փնում բանակ։ Ղոնաղեն վենները լվնալիս, ղոնաղը հարսենը ընդուեեն թաքուն ասըմ ա.— Մասաղ ինիմ էա կակող և փափուկ մններեա, սեղա առանը բախճումը շինի, համիլ վեր պրծնիս, կկյաս կոշտա։

Հարթնը խոսում չի։ Էս նայինսափը դյուղում ա թա հարթնը ռաղի յա։ Քյնում ա առանը խնձորեն ծառեն սակեն շինած փափուկ, թամուզ-թյաքուզ շորերըմը պարանց ըղնում։

Նշըմ ա, եշըմ ա, էս հարթնը կյամ չի։ Ախրը, հի՞նչ անե, քոնը սանըմ չի։ Շաա ա եշըմ, վերջապես քշերվա կեսին սեսնըմ ա, էս ա հա՝ մինը քշքաշ, տուս ու փուս բդի ուրան կյամ ա։ Էս դերասան ղոնաղը վեր ղրլթուն աշկն ա քցում, սկսում ա սերաը թփթփալ։ Էս ա հա, եկավ, ղունաղեն սեղեն ղրադը հսավ։ Ղոնաղը ծերքերը ետ ա սանըմ, խասում, թա պաչի, եշըմ ա, սեսնըմ՝ էս վեչ թա հարթնն ա, այլ Հաբուն նոր ցղնած էշին քուռակը, վեր վթվթելավ եկալ ա ղոնաղեն յրա։

71. ԱՂԱՋԱՆ ԴԱՅՈՒ ՎԵՐՍԸ

Աղաջան դային մի անդամ քյնում ա վերսի։ Սուվերած ա լյալ արջը որջից հանելը։ Էս անդամ հրացանը վերցրած, ղաման ծերքեն մանում ա արջին որջը։ Արջը սկսում ա արան քուլոլել, ղաման կոխում ա արջին փորը։ Արջը հոռհոռ ա անըմ, տյուս պրծնում։ Տյուս պրծնելիս թվանդյին ռեմենն ըղնում ա ճիաը, թվանդյն էլ ա սանըմ։ Աղաջան դային տյուս ա կյամ, արջին ման ա կյամ. հուրը տեսնում, հրցնում ա.— Ըստեղեքյ արջ չը՞ք սրհալ, վեր ղամանն էն ինի փորումը, թվանդյը՝ ճաումը։

Ասում ըն.— Տնաշին, դե սսե աջալը ծրաված ըղվեսու նման վերսկանու ըս ման կյաս, լի, վեչ թա արջու։

72. ԷՇԵՐԻՆ ԽՐԱՏԵԼԸ

Մեր դյուղացի մի աղկատ մարդ ա լյալ, հող պյան չի ունեցել, քյնացել ա քերծեն կլխան մի պասասո տեղ մի կերպ մաքրել քարից-քոլից, մաք-

ռել, ցորեն ցանել։ Մին հարուսա էլ ունեինք, մին ռելուկ էշեր օնար։ Սա էշերը պյաց ար թողում, քյնում ին էս խեղճ քյասիրին արտը օտում։ Հա քյնում ա էշատերին թափշուր անում, վեր էշերա պահե, արաս օտում ըն։ Ամալ չի կյամ։

Թա.— Դե, լյավ, անում ըրք, անում ըրք, ես կանիմ, տյուք էլ թամաշա կանիք։

Տանում ա սա մ/ն վեդրա մոխիր քերծին կլխին վեր ածում։ Էշերը կյամ ըն արաը կոշա օտում, կյամ, էտ մոխրին մեջ թավիլ տամ... դընգլ ըն սամ, էդ քերծին սակին սատկում։ Վեր մինը թոլ ա իլալ, ասել ա. «Էա մըն»։ Մինն էլ ա եկել, մին էլ թոլ իլալ, ասալ ա. «Էա էրկու»։ Մինն էլ թոլ ա իլալ, թա, գե. «Ի՞ա էլ իրեք»...

Ժողովուրդն ասում ա.— Էա հի՞նչ ըս հմրարում։

Թա.— Քերծեն կլխան լոք ավող անխրատ էշերն եմ հըմրարում։

73. ԳՅՈՒԼՍԱՆԵՑԵ ԽՈՂԱՐԱԾԸ

Գյուլսանեցե մին խողարած ա լյալ։ Դե խողարած լի, երկար վախտ տոն չար կյամ՝ շտրաթներով, ամիսներով։ Մողան վար ընգյել ար, արա կինը քյնում, կոպերատիվան մին ռոյահիլի ա ինք օնում, պերում, տինում իրանց կալիգորում։ Էս խողարածը կյամ ա, մտնում ա առն, մհակը օսեն, տեսնում՝ իրանց կալիգորում մին մարդ մահակավ ուրան յրա հուշումն ա քաշում։ Էս խողարածը մահակ շոռ ա սամ, հիլին փշոր-փշոր աեռած թափվում ա ռոշին։ Կնեգյը վաղ տալով կյամ ա, թա.— Աղա, խե՞ ա՞ ըրեր։

— Պա էն հի՞նչ անվալ մարդ ար, մհակը քաշած, մաշան կյամ ար ղրի ինձ։

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՋԱՀՆԱՂ ԵՎ ՔՅՈՒՄԲԱԹ

Գտնվում է ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղի շրջակայքում

Մելիք Շահնաղարի տխճեգյը՝ Ջահնաղը, կյամ ա Ղզղալա։ Քյնում ա շոռ կյամ Ղզղալեն հանդերը, սարերը, Ղզղլեն մոտե մին սարը, անումը Լեն-պառակ, նրան շատ աուր ա կյամ։ Նա տեսնում ա ընդեղին քյոհնա վանքը՝ Պիծի նհատակը, ավերակ տեռած։ Մղափոնն ա կյամ, վեր ա՞ի ղաշանգյ տեղեն վանքը փչացալ ա։ Վանքը՝ Պիծի նհատակը, նորից շինում տ։ Պիծի նհատակեն կողքեն ուրան հեռե մի լյավ գըշատեղ էլ ա շինում։ Վանքին ախպուրեն կըշատեն մին լյավ եղծե ա շինում, քյումրաթավուր եղծե։ Եխծուն չորս ընգյունին էլ բախչա յա քցում, ասում ա՝ հիրը ինքյը մեռնե, ուրան թաղին եղծին կշտեն։ Ջահնաղին ցանկությունը կատարվում ա. մահվելուց ետը նահան թաղում ըն ուրան շինած եղծուն կշտեն, թումբին յրա։ Նրա անունով էլ էա հանդաստանը կոչվում ա Ջահնաղ, եղծի կոշտն էլ Քյումրաթ։

2. ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՂԻՇԱ ՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(Գտնվում է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սոս գյուղի մոտ)

Խոշտնրյագը էնպիսի մին մարդ ա իլալ, ստեղես ար ու տիրական ա իլալ։ Թեկուզ սաեղ ըյագյեր էլ ըն իլալ, բայց Խոշանրյագը սաեղես տար-աիրական տ իլալ։

Տրա էն մեկալ խասյաթը ուրան կարգեն, ուրեմն... հով էր վեր փսակվես ա իլալ, նա կնեգյը տնես ա իլալ, մին քշեր պհեյիս։

Ճրարեցե մին Եղիշ անունով աղա փսակվում ա։ Հարն ասում ա.— Ա վերթի, հարթնը ատր առ Խոշանրյագին, վեր էքյուծ քյնինք, պիրինք։

Թա, ասում ա.— Ապեր, քեզ պեն չօնիս, ես տնտկան ըմ, սամ։

Եր ա կենում, սերուն-ղաշանգյ ղաման տինում հրըթաթումը, կնգա շյորեր կենում, ղյանգուկը քցում իրեսը, հանորը տղեն ասում.

— Ինձ սար Խոշանրյագի կոշար։

Սա էլ ասում ա ըլկոնեն վեր տինում «հարթնը», ինքը ծին յոր օնում, քյնում։

Խոշանրյագը կյամ ա, էս «հարթնեն» թա.— Էն ա ճոնգան մթեն ա, առ քյնի քոն իլ, ես կկյամ։

Էս «հարթնը» հսկցնում ա, թա.— Չէ, ես հըմանչում ըմ, առ քյնի պառկե, ես կկյամ։

Խոշանրյագը քյնում ա, պարանց ըղնում։ Պարանց ա ըղնում, նյնշում ա։ Էս «հարթնը» կյամ ա, տեսնում, առոռ սերուն քոն իլած։ Քըյնում ա ղաման այուս օնում, փորը, սերտը շգյարը ուրուր խառնում, առնանը ըրղան սամ, տյուս կյամ, իրը թա փեշավ ա քյնում։

Խոշանրյագին միլիցեքը ասում ըն.— Պա՞հ, եշի, էՀ, թյաղա հարթնը փեշավ ա քյնում։

Թյտղա «հարթնը» վե՞րն ա՞։